7.04.2022 թ.
349-86

Տարածքային կառավարման
և ենթակառուցվածքների նախարար
Գնել Սանոսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սանոսյան,

ՀՀ կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման նախկին ղեկավար Արայիկ Առաքելյանն ու նրա կինը՝ Հերմինե Ալեքսանյանը 2021 թվականի օգոստոսին մեղավոր են ճանաչվել ՀՀ Քրեական օրենսգրքի 308 հոդվածի հատկանիշներով՝ 2006 թվականից տարիներ շարունակ պաշտոնական դիրքի չարաշահմամբ Շիրակի մարզի Ցողամարգ ու Մուսայելյան համայնքների գյուղատնտեսական նշանակության հողատարածքները էժան գներով վարձակալելու ու մեծ գումարներով բջջային կապի օպերատորներին ենթավարձակալության հանձնելու համար:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Փոխհատուցե՞լ են արդյոք վերոնշյալ գյուղական համայնքներին հասցված ահռելի վնասը:
2. Եթե վնասը չի փոխհատուցվել, ապա խնդրում ենք նշել թե ինչ միջոցներ են ձեռնարկվում վերոնշյալ գյուղական համայնքներին հասցված վնասի փոխհատուցումը պահանջելու ուղղությամբ:
3. Խնդրում ենք տրամադրել տեղեկություն այն մասին, թե գյուղական նշանակության հողատարածքներից հեռացված են արդյոք բջջային կապի օպերատորների կողմից այդ հողամասերում տեղադրած հեռահաղորդակցության աշտարակները:
4. Ի՞նչ իրավական հիմքով է Արայիկ Առաքելյանի կինը՝ Հերմին Ալեքսանյանը, որը մեղավոր է ճանաչվել պետության դեմ ուղղված հանցանք կատարելու համար, շարունակում դասավանդել Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող թիվ 11 դպրոցում:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***



Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան